ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2017-2019թթ. Հայաստանի Հանրապետության պետական պարտքի վերաբերյալ (հոկտեմբեր ամսվա վերջի դրությամբ)









2019թ. հոկտեմբերի 31-ի դրությամբ՝

1) ՀՀ պետական պարտքը կազմել է 3,389.26 մլրդ. ՀՀ դրամ, աճելով 2018թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 1.2%-ով, 2018թ. հոկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 3.72%-ով և 2017թ. հոկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 11.59%-ով,

2) ՀՀ կառավարության պարտքը կազմել է 3,144.26 մլրդ. ՀՀ դրամ, աճելով 2018թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 1.99%-ով, 2018թ. հոկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 5.1%-ով և 2017թ. հոկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 14.58%-ով,

3) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 245.0 մլրդ. ՀՀ դրամ, նվազելով 2018թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 7.93%-ով, իսկ 2018թ. և 2017թ. հոկտեմբերի 31-ի նկատմամբ նվազելով համապատասխանաբար՝ 11.26%-ով և 16.42%-ով,

4) ՀՀ պետական պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 7,117.30 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2018թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 2.81%-ով, իսկ 2018թ. և 2017թ. հոկտեմբերի 31-ի նկատմամբ համապատախանաբար՝ 5.85%-ով և 13.03%-ով,

5) ՀՀ կառավարության պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 6,602.82 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2018թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 3.61%-ով, իսկ 2018թ. և 2017թ. հոկտեմբերի 31-ի նկատմամբ համապատախանաբար՝ 7.26%-ով և 16.06%-ով,

6) ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 514.48 մլն. ԱՄՆ դոլար, նվազելով 2018թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 6.47%-ով, իսկ 2018թ. և 2017թ. հոկտեմբերի 31-ի նկատմամբ համապատախանաբար՝ 9.43%-ով և 15.34%-ով,

7) ՀՀ կառավարության արտաքին պարտքը կազմել է 2,409.26 մլրդ ՀՀ դրամ, նվազելով 2018թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 0.05%-ով, իսկ 2018թ. և 2017թ. հոկտեմբերի 31-ի նկատմամբ աճելով համապատասխանաբար՝ 2.87%-ով և 12.36%-ով,

8) ՀՀ կառավարության ներքին պարտքը կազմել է 735.0 մլրդ. ՀՀ դրամ, աճելով 2018թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 9.31%-ով, իսկ 2018թ. և 2017թ. հոկտեմբերի 31-ի նկատմամբ համապատախանաբար՝ 13.13%-ով և 22.52%-ով,

9) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 245.0 մլրդ. ՀՀ դրամ, նվազելով 2018թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 7.93%-ով, իսկ 2018թ. և 2017թ. հոկտեմբերի 31-ի նկատմամբ նվազելով համապատասխանաբար՝ 11.26%-ով և 16.42%-ով,

10) ՀՀ կառավարության արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 5,059.35 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2018թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 1.54%-ով, իսկ 2018թ. և 2017թ. հոկտեմբերի 31-ի նկատմամբ աճելով համապատասխանաբար՝ 4.98%-ով և 13.81%-ով,

11) ՀՀ կառավարության ներքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 1,543.47 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2018 թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 11.04%-ով, իսկ 2018թ. և 2017թ. հոկտեմբերի 31-ի նկատմամբ համապատախանաբար՝ 15.46%-ով և 24.11%-ով,

12) ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 514.48 մլն. ԱՄՆ դոլար, նվազելով 2018թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 6.47%-ով, իսկ 2018թ. և 2017թ. հոկտեմբերի 31-ի նկատմամբ համապատախանաբար՝ 9.43%-ով և 15.34%-ով,

ԱԺԲԳ









ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքը 2019թ. հոկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 4,070.7 մլն. ԱՄՆ դոլար, նվազելով 2018թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 1.67%-ով, աճելով 2018թ. և 2017թ. հոկտեմբերի 31-ի նկատմամբ համապատասխանաբար՝ 2.81%-ով և 14.6%-ով:
2019թ. հոկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի կառուցվածքում՝
1) միջազգային կազմակերպությունների բաժինը կազմել է 77.06%, ինչը 2018թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ ավել է 0.12, իսկ 2018թ. և 2017թ. հոկտեմբերի 31-ի համեմատությամբ փոքր է համապատասխանաբար՝ 1.34 և 5.23 տոկոսային կետով:
2) օտարերկրյա պետությունների բաժինը կազմել է 22.44%, ինչը 2018թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ փոքր է 0.07%-ով, իսկ 2018թ. և 2017թ. հոկտեմբերի 31-ի համեմատությամբ մեծ է համապատասխանաբար՝ 1.41 և 5.4 տոկոսային կետով:
3) առևտրային բանկերի բաժինը կազմել է 0.5%, ինչը 2018թ. դեկտեմբերի 31-ի, 2018թ. և 2017թ. հոկտեմբերի 31-ի համեմատությամբ փոքր է համապատասխանաբար՝ 0.05, 0.07 և 0.17 տոկոսային կետով:

2019թ. հունվար-հոկտեմբերին ՀՀ կառավարության պարտքի գծով վճարված՝
1) տոկոսավճարները կազմել են 142.84 մլրդ. դրամ, ինչը 2018թ. և 2017թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 16.2 և 31.05 մլրդ դրամով:
2) ներքին տոկոսավճարները կազմել են 68.89 մլրդ. դրամ, ինչը 2018թ. և 2017թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 5.18 և 11.17 մլրդ դրամով:
3) արտաքին տոկոսավճարները կազմել են 73.95 մլրդ. դրամ, ինչը 2018թ. և 2017թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 11.02 և 19.88 մլրդ դրամով:

ԱԺԲԳ

Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին, մլրդ դրամ



Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը ներքին և արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին, մլրդ դրամ



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար



2019թ. հունվար-հոկտեմբերին պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը՝

1) փոխառու զուտ միջոցների հաշվին կազմել է 119.97 մլրդ. դրամ, ինչը 2018թ. և 2017թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 80.17 մլրդ դրամով և 55.99 մլրդ դրամով:

2) ներքին փոխառու միջոցների հաշվին կազմել է 99.9 մլրդ. դրամ, ինչը 2018թ. և 2017թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 66.72 և 62.26 մլրդ դրամով:

3) արտաքին փոխառու միջոցների հաշվին կազմել է 20.07 մլրդ. դրամ, ինչը 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է 13.45 մլրդ դրամով, իսկ 2017թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 6.27 մլրդ դրամով:

ՀՀ կառավարության կողմից 2019թ. հունվար-հոկտեմբերին՝

1) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 73.65 մլն. դոլար տոկոսավճար, ինչը 2018թ. և 2017թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 14.92%-ով և 53.51%-ով:

2) արտաքին վարկերի սպասարկման նպատակով մարվել է 134.58 մլն դոլարի մայր գումար, ինչը 2018թ. և 2017թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 13.68%-ով և 65.17%-ով:

3) ստացվել են 92.04 մլն. դոլարի վարկային միջոցներ, ինչը 2018թ. և 2017թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար՝ 31.2%-ով և 32.03%-ով:

4) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 208.24 մլն. դոլար (տոկոսավճար և մայր գումարի մարում), ինչը ինչը 2018թ. և 2017թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 14.12%-ով և 60.85%-ով:

ԱԺԲԳ

Պետական պարտատոմսերի ծավալը, մլրդ դրամ



Պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը, օր



ՀՀ Կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը, %



ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքը, ըստ թողարկման



2019թ. հոկտեմբերի 31-ի դրությամբ՝

1) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի ծավալը կազմել է 679.39 մլրդ դրամ, ինչը 2018թ. դեկտեմբերի 31-ի, 2018թ. և 2017թ. հոկտեմբերի 31-ի համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 91.28, 106.05 և 137.55 մլրդ. դրամով:

2) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը կազմել է 3787 օր, ինչը 479 օրով ավել է 2018թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ, 371 օրով ավել է 2018թ. հոկտեմբերի 31-ի համեմատությամբ և 980 օրով ավել է 2017թ. հոկտեմբերի 31-ի համեմատությամբ:

ՀՀ կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը 2019թ. հոկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 5.01%, ինչը 2018թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ մեծ է 0.04 տոկոսային կետով, 2018թ. հոկտեմբերի 31-ի համեմատությամբ մեծ է 0.01 տոկոսային կետով, իսկ 2017թ. հոկտեմբերի 31-ի համեմատությամբ փոքր է 0.07 տոկոսային կետերով:

ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության 2019թ. հոկտեմբերի 31-ի դրությամբ՝

1) կարճաժամկետ պարտքի բաժինը կազմել է 0.77%, ինչը 2018 թ. դեկտեմբերի 31-ի, ինչպես նաև 2018թ. և 2017թ. հոկտեմբերի 31-ի համեմատությամբ փոքր է համապատասխանաբար՝ 0.19, 0.12, 0.1 տոկոսային կետերով:

2) միջնաժամկետ պարտքի բաժինը կազմել է 7.26%, ինչը 2018 թ. դեկտեմբերի 31-ի, ինչպես նաև 2018թ. և 2017թ. հոկտեմբերի 31-ի համեմատությամբ փոքր է համապատասխանաբար՝ 0.37, 0.2, 1.75 տոկոսային կետերով:

3) երկարաժամկետ պարտքի բաժինը կազմել է 91.97%, ինչը 2018 թ. դեկտեմբերի 31-ի, ինչպես նաև 2018թ. և 2017թ. հոկտեմբերի 31-ի համեմատությամբ մեծ է համապատասխանաբար՝ 0.56, 0.32, 1.86 տոկոսային կետերով:

ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2020 -2022ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՂԵՆՇԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (հոկտեմբեր ամսվա վերջի դրությամբ)

ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը, տարի



Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով), %



ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի, %



ՀՀ Կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները, %



ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2020-2022թթ. ռազմավարական ծրագրով՝

1) պարտքի մինչև մարում միջին ժամկետի ուղենշային ցուցանիշը սահմանված է 8-11 տարի: ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը 2019թ. հոկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 9.12 տարի: Այս ցուցանիշը 2018թ. և 2017թ. հոկտեմբերի 31-ի դրությամբ արձանագրված ցուցանիշներից ավել է համապատասխանաբար 0.29 և 0.05 տարով,

2) առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշռի (պետական գանձապետական պարատոմսերի գծով) ուղենշային ցուցանիշը սահմանված է առավելագույնը 20%: Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով) 2019թ. հոկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 13.37%, որը 2018թ. հոկտեմբերի 31-ի դրությամբ արձանագրված մակարդակից ավել է 0.44 տոկոսային կետով, իսկ 2017թ. հոկտեմբերի 31-ի դրությամբ արձանագրված մակարդակներից պակաս է 3.57 տոկոսային կետով,

3) ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշռի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 80%: ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի 2019թ. հոկտեմբերի 31-ի դրությամբ ունեցել է հետևյալ պատկերը. ֆիքսված տոկոսադրույքով՝ 84.89%, լողացող տոկոսադրույքով՝ 15.11%:

Ընդ որում, 2019թ. հոկտեմբերի 31-ի դրությամբ արձանագրված ֆիքսված տոկոսադրույքի ցուցանիշը 2018 թվականի և 2017 թվականի համապատասխան ցուցանիշներից պակաս է համապատասխանաբար՝ 0.82 և 2.4 տոկոսային կետերով:

4) ներքին պարտքի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 20%, ՀՀ կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները 2019թ. հոկտեմբերի 31-ի դրությամբ ունեցել են հետևյալ պատկերը. արտաքին պարտք՝ 76.62%, ներքին պարտք՝ 23.38%: Ընդ որում, 2019թ. հոկտեմբերի 31-ի դրությամբ արձանագրված ներքին պարտքի կշռի ցուցանիշը 2018 թվականի և 2017 թվականի համապատասխան ցուցանիշները գերազանցում է համապատասխանաբար՝ 1.66 և 1.52 տոկոսային կետերով: